| | |
|---|---|
| ՊԱՇՏՈՆ | Կորպորատիվ հաճախորդների սպասարկման մասնագետ |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | 8-ժամյա գրաֆիկ, երկուշաբթիից ուրբաթ |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ք. Երևան, |
| ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ | Հնարավորինս շուտ |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | 09/05/2024 |
| ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ | Անորոշ |

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Կորպորատիվ հաճախորդների սպասարկման մասնագետի «Կենտրոն» մասնաճյուղում ստորև ներկայացված պարտականությունների իրականացման նպատակով:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Անկանխիկ առք ու վաճառքի իրականացում,
- Ավանդների ձևակերպում և սպասարկում;
- Հաշիվների, քարտերի բացում և սպասարկում;
- Հաճախորդների հետ համապատասխան պայմանագրերի կնքում, պայմանագրի դադարեցում, փոփոխություն, ստորագրում;
- Հաճախորդներին իրենց հաշիվների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, վճարային փաստաթղթերի կրկնօրինակների և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթերի տրամադրում;
- Հաճախորդների կողմից ներկայացված վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում և մուտքագրում «Գործառնական օր» ծրագիր:
- Հաճախորդներին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ համապատասխան խորհրդատվության/տեղեկատվության տրամադրում;
- Հաճախորդներին աջակցություն Բանկի քարտերի ակտիվացման, մոբայլ հավելվածներում սինքրոնացման հարցերում;
- Անհատական պահատեղերի վարձակալության պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում, պահատուփային ծառայության մասով հաճախորդների սպասարկում;

## ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն,
- Նվազագույնը 1 տարվա աշխատանքային փորձ բանկային համակարգում ,
- Բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն,
- Բանկային օրենսդրության իմացություն,
- Համակարգչային գիտելիքներ,
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացություն,
- Հաղորդակցման հմտություններ,

- Խաչաձև վաճառքի հմտություններ,
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն,
- Սթրեսակայունթություն,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/33: Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/: